


միջոցին ամէնքն էլ ստորագրում են վախենալով հարբեցզի անուն ժառանգելուց, իսկ ժողովից յետոյ գնում և անմիջապէս թարմանում են խմիչքներով։ Ժուժկալութեան քարոզիչները այն աստիճանի հակառակութեան են հասել, որ հաղորդութեան գինի անգամ գործ չեն դնում, առարկելով որ աւետարանի մէջ ասսած գինի բառը հիւթ կը նշանակէ, ուրիշներն ապացուցանում են որ նոյն գինու գերը հաղորդութեան մէջ ջուրը կարող է կատարել։ Շատերը խմիչք գործածելու հետ հալածում են նոյնպէս և ծիսելը. ուստի և յաճախ պատահում է, որ իւր տան մէջ ծիսող պաստօնն անգամ արձակում է պաշտօնից։ Դպրոցների մէջ մանուկներին շարունակ քարոզուում է որ խմիչք գործածելը մի յանցանք է սեփական անձի, ընտանիքի և հասարակութեան ընդդէմ։ Ամերիկական գպրոցներում տարեկան հարցաքննութիւններից յետոյ, աշակերտները հրապարակական բանախոսութիւնների են անում, այս բանախոսութիւնների մէջ առաջին տեղը բռնում են ժուժկալութեան գէմուղած փիլիպպեան ճառերը, որոնք ըստ մեծի մասին թութակորեն կրկնուող բառերից ու մաքերից են բաղկացած։

Մ. թ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԱՅԻՆ ՏԵՐԱՊԵՏԵԱՆ. ।

Թ. Ն Է Օ Լ Դ Է Զ Է Խ. ։

(Եարունակութիւն) *

Կ ապուհի որդի Ռոմեզզ (Հորմիզզ Օրհմազզ) Ա. սկսաւ կառավարել 272 թուի վախճանին կամ 273-ի սկզբին։ Երգէն իրբե թագաժառանգ արիութեամբ կուռել էր հոռմայեցոց ընդդէմ և աւանդութիւնը նրան տուռել էր «ՔԷ-Ց-Ա» անունը։ Զանազան առասպելների հետ միասին աւանդում են նրա մասին և այն, որ գահը բարձրանալուց առաջ կուսակալ է եղել Խորասանում (ամրող հիւսիս արևելեան գաւառներում)։ Խոչքէն թագաւոր մեծամեծ գործեր կատարելու համար հազիւ կարող էր նա առիթ ունենալ։ որովհետեւ միայն մի տարի թագաւորեց։

Որմիզզին յաջորդեց Բահրամ (Վարահան-Վահրամ)։ Ա. որ նորա որդին չէր ինչպէս ասում է աւանդութիւնը, այլ համաձայն մի արձանագրութեան՝ եղբայրը, նա պէտք է մի մեղք, զուարձասէր թագաւոր եղած լինի։ Մանին սիրտ

առաւ նրան մօտենալու, բայց զրագաշտական հոգեռականները կամ մօգերը կարողացան վճիռ կայցնել տալ նրան սպանել և մորթեցերծ անելուց յետոյ նորա խրառութլակը կախ անել տալու։ Սակառակարեց մօտաւորապէս 274—277 թ.։

Բահրամ Բ.-ի (մերձաւորապէս 277—294 թ.) մասին որ Բահրամ Ա.-ի որդին է, պարսկական աւանդութիւնը գրեթէ ոչինչ չը դիտէ, Հաւանօրէն սրանից են ծագում այն երկու, գժբաղդարար շատ վնասուած ժայռերի արձանագրութիւնները, որ բոլորովին կրօնական, մինչեւ անգամ քարոզանման բովանդակութիւն և խիստ կղերական ուղղութիւն ունին։ —Պրորոս (276—282) կայսրը ուսաւ հետ մի անգամ խաղաղութեան դաշն է կապել, և որից նախընթաց պատերազմների մասին մնաց տեղեկութիւն չունին։ Նախ քան որ Պրորոսը կարողանար պատերազմը վերսկսել սորա հետև սովոնւեցաւ։ Բայց յարոս կայսրը առաջ տարատ Պրորոսի գիտաւորութիւնը (283 թ.), առաջ անցաւ մինչեւ մշնամի տէրութեան մայրաքաղաքը, առաւ Տիգրանը, և Քոմէն (Սէլէկիայի մի մասը)։ այս նուագ պարսկիններին օգնեց կայսեր յանկարծական մահը, որ մեռաւ իրբե թէ կայծակի հարուածից։

Սրանից յետոյ ինչպէս երկումէ հռովմայեցիք առանց մեծ կախների յետ են գարձել, Յատկապէս յիշատակուումէ, որ Կարոսի յաջողութիւններին նպաստեցին պարսկների ներքին վէճերը։ Եյս շրջանն առանձնապէս հարուստ էր այսպիսի վէճերով, սակայն մնաց այս մասին տեղեկութիւններ չունին։ Մի հուետոր յիշատակում է 291 թ. Խշիսան Որմզդի (Ormies) ապատամբութիւնն իւր եղրօր շէմ բարբարոս ազգերի աջակցութիւնով։

Եյս պատանի որդին, որի պատերերը Բահրամ Բ.-ը իւր զրամների վրայ իւր ամուսնու գիմացը զրօշմել է տուել, երեկ երբէք կառավարութեան չէ հասել։ Նրա մահուանից յետոյ հաւանօրէն երկու հակառակորդներ կուռում էին զահի համար, Բահրամ Գ.-ը, որ երեկ Որմիզզի որդին էր և սարսիզ, որ մի արձանագրութեան նայելով Ծապուհ Ա.-ի որդին էր։ Յամենայն գէպս Բահրամ Գ.-ը, որ արդէն իրբե թագաժառանգ կուսակալ էր Սագաստանի (այժմ Սիստան), տէրութեան հարաւ արեւելեան կողմում, ուստի և կոչում էր Սագան-Շահ, «Սակերի թագաւոր», շատ կարճ ժամանակ միայն իշխեց։

Ա. Բահրամ Ա.-ից միջեւ Ծապուհ Բ.-ի զատ բարձրանալը թագաժառների կառավարութեան տարիները չեն կարող առանձնապէս սույզ համարուիլ։ Երկու տարուան սիսաւ այդ տարեթուերի մէջ միշտ կարենի է նսթաղթը։

2. Յորիսկ, Գրիգոր, 17. Ար Նարսէս* ասունը Պոպիկասը խառնել է Բահրամի նատ, արդէն Տիգրաններ կիսել։

* Տես. Արարատ համար Հ. եր. 287—292:

կար գոնէ կարճ ժամանակ տիրեց մայրաքաղաքին, Կարսեհն իշխումէր մօտաւորապէս 293—303 թիւր, Նա կրկն Ծապուհի ճանապարհը լունեց և զրաւեց Հայաստանը: Գալերփոս Անսարը դուրս եւ կաւ նրա առաջ (Երեւի 297-ին), սակայն Միջազգեաբում Խառանի և Կալինիկոսի (Մաքա) մէջ տեղում ջարգուեցաւ, Քայլց Դիոկղիտիանոսի իմաստուն զեկավարութեամբ Գալերփոսը կրկն հոռմէական գէնքի պատիւը մերականդնեց: Նա Ներսէ հին Հայաստանում բողոքովին ջարգեց և գերի բռնեց նրա կանանցն ու որդոցը: Խաղաղութեան դաշնադրութիւնը, որի մասին մնակ մի քիչ սույզ տեղեկութիւն ունինք: Փառաւոր արդիւնքներ տուաւ, Պարսկաստանը հրաժարուեց Հայաստանից, Միջազգետից ու մինչև իսկ մի քանի գաւառներից Տիգրիսի ձախ ափին մնաչե Քրտաստան: Եւր ընտանիքը գերութիւնից ազատելու համար Թագաւորը սիրով հրաժարուեց այդ երկներից: Այս խաղաղութիւնը (298թ.) տեսն 40 տարի:

Կարսեհն յաջորդեց իւր որդի Որսնզդ Բ-ը (մերձաւորապէս 303-ին): Սրա թագաւորութեան մասին ոչինչ յայտնի չէ:

Սրա մահուանից յետոյ (310 սկզբին): գահ բարձրացաւ իւր որդի Ստրներսնը (Աղհարնասեհ), սակայն՝ իրր թէ անզմռութեան պատճառով՝ կարճ ժամանակից յետոյ գահավէժ եղաւ և երեխ սպանուեցաւ: Մեծամեծները, որոնց ձեռքին էր ոյժը Ներսէ հի ուրիշ (անունն անյայտ) որդուն կառավարելու անընդունակ գարձրին աչքերը կորացնելով և երրորդ որդուն՝ Որմզդին բանտը դրին: Կրանք թագաւոր անուանեցին զեռ ևս չճնուած կամ թէ նոր ճնուած Իջրա (?) — Որմզդ թագուհու որդուն: Այս ամենը կատարուեցաւ 310 թուի ընթացքում: Մասուկ արբայն կոչուում էր Շապուհ:

Թէ ի՞նչ զիճակի մէջ էր տէրութիւնը Ծապուհի մօր և մեծամեծների կառավարութեան ժամանակ՝ զիւրին է երեակայել: Քայլց մանուկը շուտով մի այն պիսի այր մարդ գարձաւ, որ կարող էր միայն կառավարել: Սա Սասանեան հաստատութեան ամենանշանաւոր թագաւորներից մէկն է: Դիռ ևս մինչև նրա տղայութիւնից դուրս գալը բանտարկուած Որմզդը փախաւ հոռմայեցիների մօտ (323թ.): ուր նա մինչև իւր գախճանը մնաց, որպէսզի գեռ 363-ին հոռմայեցիների հետ միացած՝ իւր խորթ եղայր Ծապուհի դէմ պատերազմէ: Պարսկական աւանդութիւնը, որ շատ քիչ պատմական բան գիտէ Ծապուհ Բ-ի մասին, խօսում է նրա արկածներով լի

1. Այս ժամանակց սկսած թուականները կրկն սույզ են:

արշաւանքների մասին ընդդէմարաբացոց, որոնք Ծապուհի մանկութեան ժամանակ պարսից աէրութեան սահմանները շատ տեղերում՝ կոխել էին և աւերել: Այս արշաւանքների պատմութիւնները, ոչ զուրկ արարատեաց գիտաւորութիւնից, և շատ չափազանցացրած են, բայց անշուշտ Ծապուհը պէտք է իրեն նպատակ դրած լինի աւազակարարոյ Քէգուիններին քաղաքակիրթ երկրի սահմաններից հեռու պահէւլու մի գործ: որ շատ լուրջ նշանակութիւն ունի անապատներին սահմանակից երկրների համար: Ծապուհի քաղաքաշինութիւնների մասին աւանդուածներից նշանաւոր է վաղեմի Ծօշ քաղաքի նորոգութեան համբաւը: Այս քաղաքի լինակիչներն ապստամբեցին նրա գէմ: Նա ջարդել տուաւ նրանց քաղաքը փղերին ոտնատակ տալ տուաւ և ապա նորից վերացնեց: Կաւշապուհը (իսկապէս Նիւ-Ծապուր) մինչև միջին գարերի վախճանը յայտնի իրեւ արևելքի մեջ քաղաքը կամ սա է հիմնել կամ Ծապուհ Աւը:

Ծապուհի մանկութեան ժամանակ հոռմէական տէրութեան մէջ աշագին փոփոխութիւնն էր տեղի ունեցել այնու որ Կոստանդինը քրիստոնէութեան օգնել էր յաղթանակելու հեթանոսութեան վերայ: Պարսից տէրութեան քրիստոնեաններն իսկ հոյն Հռոմէը սկսան համարել իսկական քրիստոնէական տէրութիւն, և անմիջապէս այն կողմը գարձրին իրանց համակրութիւնը: Երբ Ծապուհը պատերազմ սկսաւ հոռմայեցիների դէմ (366—338թ.), սրանք իրենց այդ սէրն սկսան համարձակ ցոյց տալ, Պոնէ այդ ժամանակում զրուած քարոզները Ափրատէսի: որ մի ասորի եպիսկոպոս էր պարսից տէրութեան մէջ, այդ մասին բոլորովին պարզ լեզու է բանեցնում: 2. Սրա վրայ աւելացաւ և այն, որ մայրագագի եպիսկոպոս Սիմոնը թագաւորի ընդդէմ այնպիսի կշտամբները արձակեց, որ ոչ մի արեւելեան իշխանի դուր ը են կարող դալ, ուր մնաց թէ մի այնպիսի եռանդուն: Երիտասարդ իշխանի, ինչպիսին Ծապուհ Բ-ն էր: Այսու ընդհարման առիթը տուած էր և աչա սկսաւ զրեթէ հոռմէական պատերազմի հետ միաժամանակ քրիստոնէութեան սոսկալի հալածանքը (սկսած 339—40): Ասորի վկայաբանութիւններն այդ ժամանակից մի կենդանի

1. Այս պարսիները, որոնց յետին ժամանակներում, Խալամի տիրապետութեան օրով, Թագաւորների գիրքը: (Եա՞ Նամէ) մշակել են, իրեւանց ատելութիւնը դէպի արարաբներն արայացնուել են տեղ աւել աւանդութեան մէջ շարամիտ փոփոխութիւններ մոցնելով:

2. *Sicut Wright-ի հրատ. 79 մ. համի. Sasse, Prolegg. in Aphraatis sermones (Lipsiae 1878) Երես 11.*

պատկեր են տալիս ժամանակակից գիպուածների, ինչպէս առհասարակ բաւական լուսարանում են տէրութեան հանգամանքները և ծանօթացնում գործ անձանց հետ, և Թագաւորին զրդողը կրօնական մոլեսանդրութիւնը չէր: Հրէաներին, որոնց մոգերը նոյնչափ առում էին, որչափ և քրիստոնեաներին, նա հանգիստ թողեց: Մինչեւ իսկ վկայարանութիւնների մէջ նա քանից երեւում է զուտ կրօնական խնդիրներում իրեւ ոչ նախապաշտուած մարդ: Բայց նա ինչպէս երբեմն Դիոկղետիանուր կամլում էր տէրութեան միջից տէրութիւնը ենեղեցու կազմակերպութիւնը վերացնել Աւոտի նա բարձրագոյն և նոյն իսկ ստորին հոգեւորականութեան ընդդէմ իրատագոյն միջոցներ ձեռք առաւ և քանդեց: Աւերեց եկեղեցական շնորհերը, Խեկեղեցական համայնքները ոչնչացնելու համար ստիպում էր յաճախ գրանց նշանաւոր անդամներին, որ իրենց սեփական հռդեօրականներին՝ քարիոննեն: Հարկաւ պարտիկ մոգերը այս բարեխաջող հանգամանքից սիրու օգտուեցան իրենց կրօնական ատելութեան յագուրդ տալու համար բացի դրանից ստոր կրթերը թագաւորի հաւածական աւելի սարսափելի դարձրին, Քրիստոնեաներն այդ ժամանակ շատ զիւցազնական ողի ցոյց տուին, սակայն շատ էլ փոքրոգութիւն երեւան եկաւ: Յամենայն գէպս այս անցքերը քննագատելու ժամանակ պէտք է զուշուշանալ միակողմանի լինելուց:

Հոռվմայեցների ասելուն նայելով պատերազմը սկսան պարսիկները Միջագետք արշաւելով, Կոստանդինը մեռաւ և չկարողացաւ նրանց ընդդէմ գուրս գալ (22-ին մայիսի 337 թ.): Պարսից թագաւորի պատերազմի մէծ պատրաստութիւնները տեսնուեցան այն տարւան մէջ, որ համապատասխան է 337 թ. աշնանը: 2 Այս քասնհնդամեայ, տարուրերուոց և երկարատե ընդհատումներով շարունակուող պատերազմի առաջին և մեծագոյն բաժնի մասին, մնկը շատ սակաւ տեղեկութիւններ ունինք, մինչդեռ երկրորդ բաժնին ժամանակակիցների, մինչև իսկ ականատեսների շնորհիւ լաւ, մասամբ իսկ շատ լաւ տեղեակ ենք: Թագաւորը կամլում էր հոռվմայեցներից խել Տիգրիսի վերին բաժնի կալուածները, ուր հոռվմէական իշխանութիւնը Տիգրիսի:

1. Տես Acta martyrum orientalium ed. Steph. Evod. Assemani (Bomae 1748): Զանազան պարսկական քրիստոնէութեան հալածանքների մասին համեմատիք Georg Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer (Leipzig 1880), այս գրքի մէջ բացի որպահց շատ նշանաւոր տեղեկութիւններ կան Սասանեան ժամանակի մասին:

2. Տես վերոյիշեալ Աթրաւատիք քարոզները համեմատութեամբ թուականութեան երես հիմ:

մերձաւորութեան պատճառաւ պարսիկներին շատ անյարման էր:

Ամենից առաջ յարձակումն ուղղուած էր Մըծրին ամուր բերդի վրայ: Այս վայրութիւնը էլեւ շատ անյարման էր: Այս վայրութիւնը առաջ էր կրկին իւր իշխանութիւնների տակ նուածել: Կա երեք անգամ խստութեամբ ապարգիւն կերպով պաշարեց Մըծրինը (338, 346 և 350 թուականներին): Բացի զրանից այս պատերազմի ընթացքում պաշարումները մեծ գեր են խաղում: Խթէ Շապուհին չը յաջողուեց մեծամեծ արգիւնները ձեռք բերել երկար ժամանակով, այդ ամեններն Կոստանդիոս կայսեր շնորքը չէր, որ ամեն անգամ երբ անձամբ հրամանատարութիւն էր անում, յաղթուում էր, ինչպէս օրինակ Սինդարայի (Ծինդար, արաբէրէն Սինդար, 348 թ.) նշանաւոր գիշերային Ճակատամարտի մէջ: Գլխաւոր պատճառն այն էր: որ Դիոկղետիանու և Կոստանդինի մեծ կայսրները բերդերը լաւ ամրացրել էին և առհասարակ իրենց վտանգի ենթակայ սահմանագինների պաշտպանութեան համար մեծ հոգացողութիւն էին արել: Արգէն իսկ մեծ յաջողութիւն էր, որ պարտիկները մինչև անգամ եթէ յաղթում էլ էին, չէին կարողանում արևմտեան Միջագետք մրտնել: Բացի սրանից արքաների զինուորական ոժերը բաւական չէին առնաւած բերդերը գրաւած պահելու համար: Եյսպէս հոռվմայեցիք 360 թուին Ամերգա (Համիթ) քաղաքը, որին մի տարի առաջ մեծամեծ զոհաբերութեամբ, երկար պաշարութիւն յետոյ պարսիկները տիրել էին, առանց բերդապահների զտան: Դարձեալ շատ ձեռնուու էր հոռվմայեցների համար: Որ արքայից արքան միաժամանակ զանազան վայրենի ազգերի հետ կոռուելու էր ստիպուած: Մըծրինի երրորդ պաշարումն զրեթէ վախճանին էր հասցըրել նա, որ յանկած ստիպուեց Խորասան արշաւել: ուր իւր ներկայութիւնն անհրաժեշտ էր, Ասրեկեան կողմի պատերազմները երկար զինադաշտար յառաջ բերին (350—358), որ երբեմն միայն փոքրիկ ասպատակութիւններով էր ընդհատուում: Սակայն երբ հոռվմայեցիք բանագնացութիւններ սկսան (356—358), Շապուհին արգէն արևելեան թշնամինների հետ խաղաղութեան գածն էր կապել և բոլորովին անընդունելի պայմաններ զրաւ: Պատերազմը 359 և 360 թուականներին կրկին ազգու կերպով շարունակուեց: Շապուհի տիրեց մի քանի նշանաւոր ամրոցների, կրկին մի առ ժամանակ խաղաղութիւն տիրեց: Բայց 363-ին պատերազմի եղանակը կրկին բոլորովին փոխուեց: Պատերազմի մէջ փոքրուած և փառատէ Ցուլիանոսը, որ այժմ՝ արգէն միայն կայսր էր, վճարեց Տրայանոսի, Սեպտեմբրու

րասի և Կարոսի օրինակին հետեւլով, ուղղակի թշնամու մայրաբաղարի վրայ արշաւել: Նա գուրս եկաւ Ընախորդից ծին մարտի, արշաւեց նախ դէպի Միջազնութ և արագութեամբ անցաւ Խփրատի ընթացքով դէպի վայր: Նա աւերեց պարսկական երկրը կրակով և սրով, մի քանի քաղաք առաւ կարծ պաշարումներից յետոյ, դրանց թուում Մաշող Մալքա, Տիգրանին մօտիկ արքունի քաղաքներից մէշկը: Արևեկիա ևս եկաւ նա, պյտիկ ահա տեսաւ, որ կարող չէ առնել ամուր Տիգրանին միւս Տիգրիսի ամին: ուստի յետո նահանջեց գետի ձախ ափով: Արդ սկսան Շապուհի գնդերն իրենց յարձակումներն և նեղը ձգեցին Յուլիսանոսին: Վյուու ամենայնիւ նա անշուշա իւր բանակն առանց մէծամեծ կոռասի հոռմէտէական սահմանը կը հասցնէր: բայց ահա (25-ին յաւնիսի 363) մի ճակատամարտի մէջ մահացու մէրք ստացաւ, նրա մահուանից յետոյ զօրից կայսր լնտրուած Յորիանոսը (Jovian) այդ գժուար լիճակին յարմար անձն չէր, նա պատերազմն ու բանագնացութիւններն այնպէս վարեց, որ վերջապէս մի խայտառակ խաղաղութեան դաշն կոռուց: Շապուհն իւր վասնդաւոր թշնամու մահուանից յետոյ ցոյց տուաւ այնքան ճարպիկութիւնն որքան և չափաւորութեան: Նա ձեռք բերաւ Գալերիսի Տիգրիսի ձախ ափին վաստակած երկիրն և Միջազների մի մասը, Մծրնով և Անդքարայով: Մէծ գժուարութեամբ միայն յաջողերաւ հոռմայեցոց պայմանի մէջ մոցնելու, որ այս քաղաքների բնակիչներին իրաւունք տրուի ազտօրէն հեռանալու: Ամենից վասն էր Մծրնից Հրաժարուելն: Վյու բերդը յաջորդ պատերազմների ժամանակ միշտ պարսից յենակէտն է եղել թէ յարձակման ժամանակ ու թէ պաշտպանուելուս բոյց ունեցել և հայութեան բարեկարգութեան էր այս դոյշաւու որի պըրանիւած հառավարութեան էր Արշակունինին, որ էւնաց հաջու էր անցւու ունեց այլու և դաշտունին յանցնէն: Սակայն Հայաստանին տիրելը արքայից արքային անքան էլ գիւրին չեղաւ, թէպէտեւ նա Արշակին իւր ձեռքն անցկացրեց, բայց այդու ըստիրեց արդ բազմաթիւ բնական մասերի բաժանուած աշխարհին իւր բազմաթիւ, զրիթէ անկան նախարարներով, և աւելի ևս քիչ տէր եղաւ այդ երկրին երկար ժամանակով: Հայաստանում քրիստոնեաները աւելի հոռմայեցոց կողմն էին պահում: իսկ գեռ բաւական թուով մնացած զորասարեանները (կրակապաշտները) պարսիկների կողմը, դրա վրայ աւելանում էր նաև երկրի մեծ նախարարների փոփոխական անձնական շահէրը, որոնք աւելի սիրով ոչ մի տէր իւրենց զլիին չեին կամենում ճանաչել:

Հոռմայեցիք օգնեցին նախ գալունի և ապա բացարձակ իրենց ապաստանած Պապին: Արշակի որդուն, սակայն միայն նրան իրեւ գործիք բանեցնելու համար, որպէս զի Հայաստանը ուղղակի մի հըռովմէական գաւառ գառնայ, Վաստանումն ևս (Արերիա, որ Հայաստանից գէպի հիւսիս է գտնուում) երկու տէրութեանց կողմնակիցների մէջ կուի ընկաւ: Հինգ տարուց յետոյ կրկին պատերազմական վիճակ էր: 371 ին պարսից արքայն Հայաստանում բացարձակ կուի պիտի մնէր հոռմէական զնիքերի զէմ: Արկու կողմերն էլ կամենում էին այդ երկիրն ուժով և խորամանկութեամբ նուածել: Բայց, քանից էլ բանագնացութիւններն անյաջողութեամբ էին վերջանում: այնու ամենայնիւ սրտարին հանգամանքները (հոռմայեցոց համար Գոթերի արշաւաքը) և բանաւոր կշռադատումները թոյլ չէին տալիս որ ընդհանուր պատերազմ բացուի:

(Եարունակելի)

թարգմ: Ա. Քարամեան.



Մովսէս Կաղանիասուացույ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մասունադանում՝ գտնուած ձեռազիր օրինակները:

(Առաջին Խումբ) :

Հ 632

Ա.Մ.Ճ. = 1761

(Կարունակութիւն) :

Առողջ՝ ֆիք պատմութեան Սղուանց աշխարհն սիհթ՝ թղթեայ, կազմ՝ կաշեպատ տախտակեայ: ՀԱԴՐ-ՄԱՆ.Ք.-ԿԱԶՄ կարերը բանդուած, լուսանցքազրերը կորտած, ինչպէս նն թուղթ՝ 59, 45, 69 175, 209, 257, 247, 295, 505: Խորանզարդերից՝ 95 և 269 թղթերը միանգամյն պկած եւ տեղը շղագիր զրած եւ կացրած: ԴԱՏԱՐԿ: Թ. 1-ա. կէսը, 5-բ. կէսը, 85-ա. կէսը և 85-բ. երեսը: 91-բ երեսի կէսը 265-բ. 265-ա. կէսը 267-բ. երեսը 551-բ երեսի կէսը: ՄԽԵ.Ռ.ՈՒԹԻԹԻՒՆ՝ 27×19 մմ: ԹՈՂՂ.Ջ.Ք. 466: ԳՀ.ՐՈՒԹԻԹԻՒՆ՝ միասին 12×19. ԳԻՐ՝ Նօտր: ՏՈՂՂ.Ք. 27. ՎՀԻ.ՆԱԳԻՐԾ՝ կարմրագիր: Սկզբնատառ՝ թղթազիր, տեղ տնես սև կննդանագիր եւ ծաղկազիր: ԽՈՐԱՆՆ.Ջ.Ա. 4 հատ, երես 5. ԼՈՒԽԱՆՑ.Ջ.Ա. 76, թղթազար եւ ծաղկազար (բացի կտրտածից): ՍՏԱՑՈՂ՝ Յակոր Կաթուուկն Եամսինցից: Աշխարհին, ի յերիս հատորս բաժանեալ:

Տեղեկութիւնը և յիշատակագրութիւնք:

ԵԲԵՍ 1^{ու}

« Օգնեա տէրարիս տէր, և զսկսեալս ի յաւարտ հասն և կատարեաւ: Գիքը պատմութեան Աղուանից Աշխարհին, ի յերիս հատորս բաժանեալ: